

• Իմունոթերապիա/հակամարմիններ օգտագործող բուժումներ:

• Սակավարյունություն և քրոմոցիտոզ:

• Երկաթ պարունակող դեղամիջոցների ներերակային բուժում:

• Արյան բաղադրիչների տրամադրում և ներարկում:

• Կաթնաթորանքային և այլ ներարկիչ աուարկանների տեղադրում և խնամք:

• Հակամակարդիչ դեղորայքով բուժում տրանսյին պայմաններում (Կունադինով բուժում):

• Հիվանդների ուսուցման և աջակցման խմբեր:

• Գիտական կլինիկական փորձարարական ծրագրեր, որոնք նախատեսում են տարբեր նորագույն միջոցների օգտագործում, ներարկայի՝ ուսուցքի անոթային սնուցումը առքելակող դեղամիջոցներ, սիճուկներ, բջիջների քայքայմանը նպաստող դեղամիջոցներ, բիոֆոսֆանատներ, արյան կարմիր գնդիկների արտադրմանը նպաստող դեղամիջոցներ, մոնոկլոնալ հակամարմիններ, սնուցման կարգավորիչներ, ստույգ ուսուցքին ուղղված բուժական դեղամիջոցներ և այլն:

• Եթե առկա է անհրաժեշտությունը, համաձայն ռեվիմատոլոգի և նյարդաբանի նշանակումների, մենք տրամադրում ենք համապատասխան ներերակային բուժումներ օսթեոպորոզի, ռեվիմատոլոգի պոլիարտրիտի, բաղմատարած սքլեռոզի և այլ նմանատիպ դեպքերում:

**Տանագործակցող Վիվանդանոցների Ցանկը**  
**Hospital Affiliations**

Մեր բժիշկները կարող են իրականացնել իրենց բուժական ծառայությունները, ներառյալ կոնսուլտացիաները, ընդունումները և բուժական գործողությունները ստորև նշված հիվանդանոցներում:



**Garfield Medical Center**  
Monterey Park

**Glendale Memorial Medical Center**  
Glendale

**Glendale Adventist Medical Center**  
Glendale

**Hoag Memorial Hospital Presbyterian**  
Newport Beach

**Long Beach Memorial Medical Center**  
Long Beach

**Los Alamitos Medical Center**  
Los Alamitos

**Orange Coast Memorial Medical Center**  
Fountain Valley

**Pacific Hospital**  
Long Beach

**San Gabriel Valley Medical Center**  
San Gabriel

**St. Mary Medical Center**  
Long Beach

**Verdugo Hills Hospital**  
Glendale



**OFFICE LOCATIONS**

Մեր բժշկական մասնագետները գտնվում են

**GLENDALE**  
222 W. Eulalia Street, Suite #100-B  
Glendale, CA 91204  
818-637-7611  
FAX: 818-637-5106

**HUNTINGTON BEACH**  
19582 Beach Blvd., Suite #212  
Huntington Beach, CA 92648  
714-252-9415  
FAX: 714-963-0713

**LONG BEACH**  
1043 Elm Avenue, Suite #104  
Long Beach, CA 90813  
562-590-0345  
FAX: 562-437-8139

**LOS ALAMITOS**  
3791 Katella Avenue, Suite #205  
Los Alamitos, CA 90720  
562-430-5900  
FAX: 562-799-8379

**MONTEREY PARK**  
600 N. Garfield Avenue, Suite #210  
Monterey Park, CA 91754  
626-573-8154  
FAX: 626-573-9431

Հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, այցելեք մեր էլեքտրոնային կայքը՝ [www.pacshoresoncology.com](http://www.pacshoresoncology.com)

**PACIFIC SHORES MEDICAL GROUP**


**HEMATOLOGY / ONCOLOGY**  
**ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**



Կազմակերպությունը Հանդիսանում է Լոս Անճելեսի Կալիֆորնիայի Համալսարանի **UCLA HEMATOLOGY/ONCOLOGY** գիտական համակարգի անդամ:

**GLENDALE**  
**HUNTINGTON BEACH**  
**LONG BEACH**  
**LOS ALAMITOS**  
**MONTEREY PARK**

[www.pacshoresoncology.com](http://www.pacshoresoncology.com)



**Մեր Կողմից Առաջարկվող Ծրագրի Բովանդակությունը:**

Մեր ուռուցքաբանական և արյունաբանական ծրագրերը ուղղված է մատուցելու բարձրորակ բուժում արյան հիվանդություններով և ուռուցքներով տառապող մարդկանց: Ինչպես հայտնի է, բժշկական ուռուցքաբանությունը զբաղվում է այն հիվանդների բուժմամբ, որոնք տառապում են տարբեր չարորակ ուռուցքներով, մինչդեռ արյունաբանությունը զբաղվում է տարբեր արյան հիվանդություններով:

Մեր արհեստավարժ անձնակազմը մատուցում է խիստ մասնագիտացված բժշկական օգնություն արյան հիվանդություններով և ուռուցքներով տառապող հիվանդներին մեր բոլոր բժշկական կենտրոններում: Մեր բոլոր բժշկները ունեն բարձր մակարդակի մասնագիտացում:

Շուրջ 20 տարվա ընթացքում մենք մատուցել ենք մեր ծառայությունները ավելի քան 30,000 հիվանդներին: Այդ հանգամանքը դարձնում է մեր կազմակերպությունը երկրի ամենամեծ և ամենափորձառու կենտրոններից մեկը: Մեր անձնակազմը ուղղորդված է օգնելու առանձին հիվանդներին և իրենց ընտանիքներին իրագործելու իրենց հատուկ կարիքները և միևնույն ժամանակ հաղթահարելու մտահոգությունները, կապված չարորակ ուռուցքի և արյան հիվանդության հետ:

**Ձեր Այցելությունները**

Այցելությունները մեր բժշկական կենտրոնում կատարվում են Երկուշաբթի օրվանից մինչև Ուրբաթ օրերը, ժամը 8:30-ից մինչև երեկոյան ժամը 5-ը: Այդ ժամերից դուրս և Շաբաթ-Վիրակի օրերը այցելությունները կարող են կատարվել հիվանդների կարիքներին համաձայն: Ընդհանուր առմամբ բոլոր այցելությունները նախապես պէտք է պլանավորվեն, սակայն աշխատանքային ժամերին որպես օրենք բժշկական օգնությունը հնարավոր է իրականացնել եթե կա շտապ ծագած կարիք: Եթե առկա է որեւի տագնապայից իրադրություն, դուք կարող եք օգտվել մեր շուրջօրյա հեռախոսային ծառայությունից: Նման պարագաներում խնդրում ենք հեռաձայնել մեր սովորական հեռախոսահամարով: Համապատասխան ծառայությունը

անմիջապես իրազեկ կը պահի ձեր բժշկին եղած խնդրի մասին:

**Տեղեկատվություն Չարորակ Ուռուցքների և Արյան Հիվանդությունների Մասին:**

Մեր անձնակազմը պատրաստ է համագործակցելու ձեզ հետ և տրամադրել ձեզ ուսումնական նյութեր, որոնք առնչվում են ձեր հիվանդությանը և դրա բուժմանը: Մենք խրախուսում ենք հիվանդների ձգտումը՝ խնդրել և ստանալ մեր քույրերից կամ բժիշկներից լրացուցիչ տեղեկատվություն կամ նյութեր, որոնք կարող են առնչվել համապատասխան հիվանդությանը: Մեր կողմից պատրաստված հիվանդների ուսուցման գրքուկը պարունակում է չափազանց օգտակար նյութեր: Ոնդրեք ձեր բուժքույրից կամ բժշկից տրամադրելու ձեզ այն:

**Բուժման Ծրագրեր**

Բուժման ծրագրերը հաճախ ներառում են համապարփակ մոտեցումներ, որոնցով նախատեսվում է վիրաբուժական գործողություններ, ճառագայթում, քիմոթերապիա, հակամարմիններով բուժում, և այլ նորագույն դեղորայքներ, որոնք մասնավորապես ուղղված են դեպի ուռուցքային բջիջները և այլ տեսակի բուժումներ: Մեր բժիշկները, որոնք ուռուցքաբանության մեջ հատուկ պատրաստում ստացած մասնագետներ են, անմիջականորեն աշխատում են ձեր ընտանեկան բժշկի, նաև ձեր պաթոլոգ մասնագետի, ճառագայթաբանի և այլոց հետ: Նմանաձև համապարփակ ընկերակցությունը խիստ անհրաժեշտ է հաջողակ բուժման պլանը իրականացնելու ընթացքում:

Մենք խրախուսում ենք հիվանդներին և նրանց ընտանիքներին մասնակցելու բժշկական որոշումներ կայացնելու ընթացքին: Մեր բժշկական ծրագրերը հանդիսանում են Լոս Անճելըսի Կալիֆորնիայի Համալսարանի ուռուցքաբանության գիտական ծրագրերի մի մասը, որը թույլ է տալիս կիրառել ամենաարդիական նվաճումները մեր բուժարանի մեջ: Մեր գործունեությունը, որը համագործակցված է ԱՄՆ Ուռուցքաբանական Ինստիտուտի և այլ հայտնի գիտական խմբերի հետ, ներառյալ National Surgical Adjuvant Breast and Bowel Project, նաև կենսադեղագոծական

արտադրանք իրականացնողների հետ, թույլ է տալիս մեզ լինել ներառված տարբեր նորագույն բուժական ծրագրերի մեջ: Այս վերջին նորամուծությունը թույլ է տալիս ստանալ և օգտագործել մոլեկուլյար գործոններ, որոնք կառուցված են այնպես, որ կարող են գրոհել ուռուցքային բջիջների ամենագագայուն և թույլ մասերը, ոչնչացնելով նրանց, բայց խնայելով առողջ բջիջները և հյուսվածքները: Այդ շարքում են նորագույն «մոնոկլոնալ» հակամարմինները, փոքր չափի մոլեկուլները, որոնք արքեյակում են ուռուցքային բջիջների զարգացման ճանապարհները: Շարքը լրացնում են հակաուռուցքային սիժուկները, գենային պարունակություն ունեցող նյութերը և այլ արագ զարգացող և արագ տարածվող ուռուցքների բուժման հնարավորություններ: Հիմնական բուժումը ձեզ կարող է տրամադրվի մեր հարմարավետ արտահիվանդանոցային կլինիքայի պայմաններում:

Այցելեք մեր [www.pacshoresoncology.com](http://www.pacshoresoncology.com) կայքը, որտեղ կտեղեկանաք մեր այլ ծրագրերի, անձնակազմի և մեր կողմից մատուցվող ծառայությունների մասին:

**Օժանդակ և Լրացուցիչ Ծառայություններ**

Մեր անձնակազմը անմիջական ձեռով աշխատում է այլ մասնագետների հետ, ինչպիսին են օրինակ ցավազրկման բուժում իրականացնողները, սնուցման մասնագետները, Հոգեբանական և սոցիալական օգնություն իրականացնողները, Փիզիքական վերականգնումը և ինֆեկցիայի վերահսկումը ապահովողները: Ուռուցքների ոփսկի գնահատման և ուռուցքների կանխարգելման ծրագրեր են իրականացվում թե հիվանդների, թե իրենց բարեկամների համար:

**Ապահովագրություն և հաշիվների Ներկայացում**

Մեր հաշվապահական հաշիվների բաժինը պատրաստ է քննարկելու հնարավոր ֆինանսական տարբերակներ և պատասխանելու ձեր հարցերին: Մեր գրասենյակը պատրաստ է ներկայացնել հաշիվները ձեր ապահովագրական ընկերությանը, կամ այլ ընկերություն, որը պատրաստ է փոխհատուցել ծախսերը կապված մատուցված ծառայությամբ:

յունների հետ: Մենք ընդունում ենք հիմնական ապահովագրական ծրագրերը, Medicare և մասնակցում ենք բավական լայն թվով այլ ծրագրերի: Մենք նախընտրում ենք ստանալ բոլոր այն մուծումները որոնք չեն կատարվելու ձեր ապահովագրական ընկերության կողմից մինչև ծառայությունների ստանալու պահը, եթե ուրիշ այլ հնարավորություն չի նախատեսվել:

**Դուք Կարող Եք Օգնել Մեզ**

Ոնդրում ենք նախապես, (այսինքն մինչև 24 ժամ առաջ) իրազեկել մեզ, եթե մտադիր եք հետաձգել ձեր պլանավորված այցելությունը: Ոնդրում ենք ուսումնասիրել ձեզ ներկայացրած բժշկական հաշիվները և հեռաձայնել մեր հաշվապահական բաժինը եթե ունեք որեւէ դժվարություն ձեր հաշիվները հասկանալու և մեկնաբանելու հարցում: Ձեր մեկ հեռախոսազանգը կարող է ուղղել հնարավոր սխալը և կանխել թերի ըմբռնումները: Տեղեկացրեք մեզ ձեր ֆինանսական դժվարությունների մասին, ինչը թույլ կտա օգնել ձեզ պատշաճ կերպով: Նաև խնդրում ենք տեղեկացնել մեզ հնարավոր փոփոխությունների մասին, որոնք առնչվում են ձեր անվանը, հասցեին, հեռախոսահամարին և ապահովագրական ծրագրերին: Ամեն անգամ այցելելիս մեզ, խնդրում ենք ունենալ ձեզ հետ ձեր ապահովագրական կարտը: Ոնդրում ենք նաև տեղեկացնել մեզ թե ինչպես մենք կարող ենք բարելավել մեր կողմից մատուցվող ծառայությունները: Ձեր ներդրումը այս հարցում գնահատելի է և մենք պատրաստ ենք ընդունելու ձեր կողմից արված բոլոր առաջարկությունները: Մեր ծառայությունները գնահատելու հարցաշարը հնարավոր է ստանալ բոլոր մեր բժշկական գրասենյակներում:

**Արյունաբանության և Ուռուցքաբանության Ծառայություններ**

- Ուռուցքային և արյան հիվանդությունների հետ կապված կոնսուլտացիաներ և նրկրորդ կարծիքի ներկայացում:
- Գիմիոթերապիայի դեղամիջոցների ներարկում և այլ հակաուռուցքային բուժումներ: